

թէ թղթի՝ այլ մարդկանց սրտերի մէջ պէտք է գրուէր, երբ բոլոր մարդիկ կարող էին Աստուած ճանաչել, առանց միջնորդի, առանց զօհի կենդանի Աստուծուն զիմել. և ամեն քրիստոնեայ, որ հաղորդակից է այդ երջանկութեան, չէ կարող երախտագիտութեամբ չլիշել այն մեծ մարգարէի անունը, որ անթիւ տառապանքներ է կրել այսպիսի կեանքի ճանապարհ հարթելու համար և որ այսօր էլ անլուելի բերանով խօսում է մեզ հետ, սուրբեցնում թէ ինչ ջերմեռանդութեամբ աղօթել պէտք է Աստուծուն, ինչ պիտի հաւատարմութիւն և տոկունութիւն ցոյց տալ ճշմարտութեան շաւղի վերայ:

Կ. Վ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏԻ»

Երեմիա մարգարէի մասին մի համառօտ ծանօթութիւն տալու առիթ եղաւ մեզ «Արարատի» ներկայ համարում տպուած Բարոսի գրքի հատուածը: Այս անունով մի գրութիւն ինչքան իմ ձեռքն եղած աղբիւրներից ստուգել կարողացայ, յիշուում է միայն Նիկիփորի և Աթանասի անուամբ մնացած ցուցակների մէջ և դեռ մինչև այժմ ոչ մի տեղ յայտնի և տպագրուած չէ եղել: Հին կտակարանի կանոնի մէջ մտել է միայն Բարուքի թուղթը, որի մեկնութիւնը գրելով գերմանացի աստուածաբան Ֆրիշէ* նկատում է, թէ լատիներէն և ասորերէն լեզուով մի թուղթ ևս կայ մնացած, որ կարող էր Բարուքի յիշեալ գրուածքը լինել, քայց խիստ կասկածելի է: Այդ թղթի նորա առաջ բերած բովանդակութիւնից երևում է, որ արդարև մեր հրատարակած Բարոսի բոլորովին տարբեր բան է: Մասնագէտներին կմնայ ի հարկէ այդ գրութեան ժամանակը և ունեցած արժէքը որոշել. ինչքան որ մենք դատել կարող ենք՝ անհավանական չէ, որ նա նոյն իսկ նախքրիստոսեան ժամանակում յառաջ եկած լինի հրեաների մէջ և յետոյ քրիստոնեաների ձեռքով փոփոխութեան ենթարկուած: Գործող անձինքն այստեղ՝ Բարուք, որ երեմիա մարգարէի գլխաւոր օգնականն էր և նորա մարգարէութիւնները գրի է առել (Երեմ. 1, 9) և նորա հետ մէկ տեղ կգիպտոս գնացել (Երեմ. 10, 6): Աբրամելիք Նիժնովկացին, որ նորան փոփոխ միջոց հանել, մահից

աղաւել էր (Երեմ. 1, 9, 7 շ.), նոյն իսկ երկրորդական պարագաներ (օր. թուղթ՝ Երեմ. 10, 1 շ.)՝ երեմիայի մարգարէութիւնից են առնուած, իսկ նորա մասին պատմածը ոչինչ կապ չունի ի հարկէ իոկական պատմութեան հետ: Գրուածքի էական մասը և բուն նրպատակը կազմում էին անշուշտ այն յայտնութիւնները, որ մահից առաջ երեմիան տուել է և որ զեղջուած են մեր ձեռք հասած բաժնի մէջ՝ գուցէ նոյն իսկ այն պատճառով, որ հրէական տիպ ունէին, վերջին ժամանակի հրէից Մեսիայի մասին ունեցած գաղափարներն էին արտայայտում: Այդպիսի յայտնութիւններ Քրիստոսից առաջ և Քրիստոսի ժամանակ շատ են գրուել հրէից մէջ և նոցանից մի քանիսը մեր ձեռքն են հասել, որոնք վերջերս մանաւանդ շատ են զբաղեցնում պատմագէտ աստուածաբաններին, ծառայելով իբրև թանգագին նիւթ՝ քրիստոնէութեան նախապատրաստական ժամանակը և առաջին գարի բազմաթիւ երևոյթները պարզելու համար:

Մեր հրատարակած Բարոսի առաջին օրինակը Մայր Աթոռի գրատան ձեռագիրների Մայր ցուցակի մէջ գտնելուց յետոյ (ձառքնաթիւ, Հ. 920) մեծազիր բոլորագիր Հարախառն աստուանեալ, գրքեալ ի թուղթ բամբակի ի Մատթէոս քահանայէ ի Վերին Նորալանս, ի թուին Հայոց Ձե. 1856, եր. 119, թ. մ ձգ) ես հետաքրքրուեցայ իմանալու, թէ արդեօք նոյնը Միսիթար Այրիվանեցու նշանաւոր ձառքնտրի մէջ չէ՞ գործած* (Հ. 926 ըստ մայր ցուցակի) և տեսայ յիրաւի, որ վերջինիս իւր ժամանակագրութեան մէջ «Ողբ երեմիա ի Բաբելոն» վերնագրով յիշածը մի և նոյն Բարոսի է, ինչ ինչ փոփոխութիւններով և յաւելուածներով: Եւ որովհետև ոչ միայն այս փոփոխութիւնները կարևոր տեղ են բռնուծ, այլ և ամբողջ հատուածը տարբեր թարգմանութիւն է երևում, տարբեր աղբիւրից յառաջ եկած՝ մենք հրատարակում ենք երկու օրինակները միասին, յուսալով որ նոցա բազմաթիւնը աւելի կը-

* Տես Հայր Գալէմբարեանի յօդուածը՝ Հանդէս Ամսօրեայ, 1891, թիւ 6: Արարատի, դեկտեմբեր ամսի համաբում տիպի տեսիլը շատ շտապով տպագրութեան յանձնելու ստիպուած՝ ուղարկութիւն չէի դարձրել, որ այդ գրուածքն էլ Այրիվանեցու ձառքնտրից է: Երևում եմ այս ձառքնտրից դեռ բաւական չիւթ կարող կլինինք մենք մատակարարել եւ մի ուրիշ առիթ տարականս գրուածքն այս թանգագին ժողովածուի մասին մանրամասն տեղեկութիւն կտանք:

* Kurzgefasstes Exegetisches handbuch zu den Apokryphen des A. T. 1851.

զիւրացնէ քննադատի գործը: Առանձնապէս հետաքրքիր է նոցա վերնագիրների տարբերութիւնը: Այրիվանեցու տուած վերնագրից պէտք է եզրակացնել որ նա ինքը կամ Սարկաւագ փարգապետն է թարգմանել այս հատուածը «ի հուսմոց գրոց» և որ յունարէնի մէջ սա նկատուել է իբրև շարունակութիւն Մնացորդաց Գրքի: Որովհետև միւս ձեռագիրը աւելի ուշ ժամանակից է՝ սպասելի էր, որ նա սորանից կախումն ունենար, բայց այդ ոչ մի կէտում չէ երևում: Այնտեղ գրուածքն աւելի նախնական տիպ ունի և աւելի համառօտ է: Նախնական պէտք է լինի նաև նորա Բարսեղ վերնագիրը, որովհետև այդպիսի մի գիրք երբեմն յայտնի եղել է. իսկ Մնացորդաց շարունակութիւն համարուել է նա յունարէնի մէջ երևի այն պատճառով, որ շին կտակարանում Մնացորդաց գրքերը վերջանում են այնտեղ, ուր Երեմիայի գուշակութիւնը գերեզարծի մասին կատարուում է Կիւրոսի միջոցով: Կարող էր վերջապէս մնացորդ բառը սկզբում իբրև ածական անուն գործածուած լինել և յետոյ մեզ ծանօթ գրքերի համար ընդունուել: պէտք է նկատել սակայն, որ Այրիվանեցու օրինակի մէջ այս հատուածից առաջ բերած է Մնացորդաց գրքի վերջին կտորը՝ ձեռագրի դատարութեանը նայած բոլորովին անտեղի կերպով: Թերևս այդ շ կտորները իրար մօտ գտել է Այրիվանեցին այն յունարէն օրինակի մէջ, որից իւր թարգմանութիւնն արել է:

Մահ երէմիայի հատուածին գալով այստեղ էլ մի օրինակը 920 հ. ճառընտրից է արտագրած և 923 հ. ի հետ համեմատած, իսկ միւսը Այրիվանեցու ճառընտրից: Սորանով մենք ամբողջացնել կամեցանք Երեմիա մարգարէի մասին մեր ձեռագիրներում պահուած յիշատակարանների թիւը և միանգամայն մասնագէտների ուշադրութիւնը հրաւիրել յատկապէս Մահ Երեմիայից գրուած քի վերայ, որ ինչպէս Հայր Զարգանալեան էլ յիշում է*, յաճախ կրկնուում է մեր ճառընտրիների մէջ՝ իւրաքանչիւր մարգարէի մասը իւր յիշատակի առթիւ. իսկ Այրիվանեցու օրինակում բոլորը մէկտեղ մէջ է բերած: Ինչպէս Հայր Զարգանալեան նկատում է, ես ևս չկորոզացայ ոչ մի տեղ օտար գրականութեան մէջ յիշատակութիւն գրանել զօգտ մասին, սակայն բոլորովին անհիշելի եմ համարում նորա կարծիքը (զոնէ

մեր հրատարակած կտորի նկատմամբ, առ այժմ չեմ համեմատել և չեմ կարող տեսլ թէ արդեօք բոլորը նոյն հեղինակի գործ է) «Թէ ի մերոց յօրինուած ըլլան»: Այստեղ կան անգեղութիւններ, որ մերայինք ոչ մի տեղից առնել չէին կարող գաղափարներ (օր. նեոի գաղափարը), որ Յայտնութեան գրականութեան, քրիստոնէական առաջին դարի տիպն են կրում: Առանձնապէս հետաքրքիր է այստեղ Ուխտի տապանակի մասին բերած աւանդութիւնը, որ ըստ Երեմիա 3 ԳԼ. 16 հ.՝-ի այս մարգարէի ժամանակ արդէն հաւանականօրէն գոյութիւն չունէր:

«Արարատը» այս համարից սկսած կունենայ իւր յաւելուածը, ուր կտպագրուին հետզհետէ հատուկտորներ Մայր Աթոռի ձեռագիրներից՝ առ այժմ որքան կարելի է հնագոյն յիշատակարաններ:

Կարապետ Ղարղապետ:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

1. ԿՅԹ ՈՒԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Աթոռիկութեան հաւատարիմ Աւսարօ-Հունգարիան սկսել է հոգսեր պատճառել Հոռովի քահանայապետին: Անցեալ տարուան ընթացքում Հունգարիայում նոր ընդունուած օրինագծերը, որ վերաբերում են ամուսնալուծութեան և քաղաքական ամուսնութեան գրգռել են Հունգարիայի եպիսկոպոսներին, որոնք այդ առթիւ դիմել են պապին: Պապը երկար ժամանակ տատանուելուց յետոյ մարտի 6-ին եկեղեց. ժողովի մէջ (Consistorium) արտայայտեց իւր կարծիքը, որ ապա մարտի 8-ին հրատարակուեց, Պապը իւր ճառի սկզբում դատապարտում է հունգարական նոր օրէնքները ամուսնութեան և ամուսնալուծութեան վերաբերութեամբ: Պապի կարծիքով քաղաքական իշխանութեան իրաւունքն է որոշել ամուսնութեան նշանակութիւնը քաղաքական կեանքի համար, բայց եկեղեցուն է պատկանում այն վճիռների իրաւունքը, որ վերաբերում են ամուսնութեան կապին, որովհետև Քրիստոս իրաւունք է տուել եկեղեցուն պսակը ճանաչել իբրև խորհուրդ: — Եթէ պապի յարաբերութիւնները Աւսարօ-Հունգարիայի հետ նոր են սկսել վատանալ, Իտալիայի հետ նա այսպէս ասենք, անընդհատ պատերազմի մէջ է: Սկսած 1870 թ. երբ Հոռովի մայրաքաղաք գարձաւ նորածին Իտալիայի և խլուեցաւ

* Հայկական Թարգմանութիւնը նախնեաց, 1889. եր. 486: